ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«18» 10 2023 թ. Թիվ 246-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ 91-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2023 թվականի մարտի 29-ի ««Դասը վարում է քննիչը» խորագրով դասընթացի առարկայական ծրագիրը և դասընթացավարներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» թիվ 91-Լ հրամանի N 1 հավելվածի (այսուհետ՝ հավելված) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. ՀՀ Քննչական կոմիտեի յուրաքանչյուր ստորաբաժանում (վարչություն, բաժին) մեկ ուսումնական տարվա ընթացքում անցկացնում է ութ դասաժամ (յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում չորս դասաժամ)՝ ամսվա ընթացքում մեկ դասաժամ:»:

2. Հավելվածի 12-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ